# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 17

*Փամբակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի արտահերթ նիստի.*

գ. Փամբակ                                                                                    Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը:

**Մասնակցում էին՝**

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Արայիկ Քոչարյանը, Աշոտ Անտինյանը, Սերյոժա Սարդարյանը, Էմմա Գասպարյանը, Արմենուհի Ոսկանյանը, Պավլիկ Պապինյանը, Շուշանիկ Հակոբյանը, Գրիգոր Կարապետյանը և Արշակ Սրապյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը, Թինա Բոջուկյանը, Նաիրա Հարությունյանը և Սևակ Խաչատրյանը:

**Նիստից բացակայող ավագանու անդամներ չկան;**

**ՆԻՍՏԸ** - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 11.15-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստը վարողն իր նախաձեռնությամբ առաջարկեց օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 10-11-րդ հարցեր և որոշման նախագծեր հետևյալ բովանդակությամբ.

10. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2021 թ-ի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման մեջ փափոխություններ կատարելու մասին:

11. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի տարածքում 2023թ-ին իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի հայտերը հաստատելու մասին:

**Կողմ՝** 15 **ձայների համաձայնությամբ որոշումների նախագծերն ընդգրկվեցին օրակարգում:**

**Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծերով:**

**Կողմ՝ 15, ընդունվեց որոշում:**

**Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.**
**Հաստատված օրակարգը՝**

1. Փամբակ համայնքի համայնքային սեփականության 2022թ-ի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

զեկ. Տ. Անտինյան

2. Լոռու մարզի Փամբակ համայնքի բնակավայրերի գլխավոր հատակագծի մշակման նախագծման առաջադրանքը հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

3. Դավիթ Արմենի Հովսեփյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

5. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և վարձակալության պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

6. Կարեն Արտակի Գաբրիելյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

7. Փամբակ համայնքի Վահագնաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

8. Փամբակ համայնքի Բազում գյուղի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

9. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2021 թ-ի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման մեջ փափոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

10. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի տարածքում 2023թ-ին իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի հայտերը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

11. Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

**ԸՆԹԱՑՔԸ՝**

**1. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի համայնքային սեփականության 2022թ-ի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջին կարգի մասնագետ Տաթևիկ Անտինյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ բոլոր բնակավայրերում և համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ներում անց է կացվել գույքագրում, հաշվառվել է համայնքային սեփականության ամբողջ գույքը, նախապատրաստվել են փաստաթղթերը: Ստորև ներկայացվում է համայնքի գույքը՝ ըստ արժեքի.

1. Գույք՝ 2346302146 դրամ ընդհանուր արժեքով որից՝
1) Շինություններ - 953425211 դրամ
2) Շենքեր - 542449721 դրամ
3) Սարքավորումներ - 29927121 դրամ
4) Տրանսպորտային միջոցներ - 115870999 դրամ
5) Տնտեսական գույք - 669828518 դրամ
6) Այլ հիմնական միջոցներ - 30730623 դրամ

7) Գրքային ֆոնդ - 3829998 դրամ
8) Արագամաշ առարկաներ - 239955 դրամ
2. Դուրս գրման ենթակա գույք և սարքավորում - 1841795 դրամ:
3. Գույքագրման ընթացքում պակասորդ և ավելցուկ չի հայտնաբերվել:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում:***

**2. ԼՍԵՑԻՆ** - Լոռու մարզի Փամբակ համայնքի բնակավայրերի գլխավոր հատակագծի մշակման նախագծման առաջադրանքը հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 29-ի N 4/Ս-8 եզրակացությունը՝ անհրաժեշտ է հաստատել Փամբակ համայնքի բնակավայրերի գլխավոր հատակագծի մշակման նախագծման առաջադրանքը:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում:***

**3. ԼՍԵՑԻՆ** - Դավիթ Արմենի Հովսեփյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ համայնքի ղեկավարին է դիմել Դավիթ Արմենի Հովսեփյանը՝ իրեն պատկանող 06-010-0101-0199 ծածկագրով 2.16296 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության 5-րդ կարգի խոտհարքը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության փոխադրելու խնդրանքով:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում:***

**4. ԼՍԵՑԻՆ** - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2023թ-ի բյուջեի եկամուտները և ծախսերը բաշխվել են հետևյալ ուղղություններով.
Համայնքի բյուջեի եկամուտներ՝
Հարկային եկամուտների ցուցանիշը հաշվարկելիս հաշվի են առնվել առկա ապառքները և 2022 թվականի հաշվարկային ցուցանիշները, քանի որ դեռևս 2023թ-ի հաշվարկային ցուցանիշներ չունենք: Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեի եկամտային մասը կազմում է 561474.0 հազար դրամ, որից հարկեր և տուրքեր՝ 130572.1 հազ. դրամ, պաշտոնական դրամաշնորհներ /դոտացիա/ 401679.0 հազ. դրամ, այլ եկամուտներ՝ 29222.9 հազ. դրամ, որից՝ գույքի վարձակալություն՝ 13584.9 հազ. դրամ, վարչական գանձումներ՝ 14838 հազ. դրամ, այլ եկամուտներ՝ 800.0 հազ. դրամ:
Ընդամենը եկամուտներ - 561474.0 հազար դրամ
այդ թվում՝

- Վարչական բյուջեի մասով 561474.0 հազար դրամ
- Ֆոնդային բյուջեի մասով 69955.2 հազար դրամ

Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝
Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեի ծախսերը կազմում է.
Ընդամենը ծախսեր - 633208.3 հազար դրամ
այդ թվում

- Վարչական բյուջեի մասով 561474.0 հազար դրամ
- Ֆոնդային բյուջեի մասով 141689.5 հազար դրամ

Փամբակ համայնքի 2023թ-ի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգմա, բաշխվել են հետևյալ կերպ.

1. Ընացիկ՝ վարչական ծախսեր կազմում է 561474.0 հազար դրամ.

Աշխատողների, աշխատավարձեր և հավելավճարներ հոդվածով նախատեսվել է 190000.0 հազար դրամ: Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման համար նախատեսվել է 64810.0 հազ. դրամ: Դրամաշնորհ Փամբակ համայնքի ենթակայության ՀՈԱԿ-ներին՝ 226835.8 հազ. դրամ: Սոցիալական նպաստներ համայնքի անապահով ընտանիքներին՝ 4600.0 հազ. դրամ: Այլ ծախսեր՝ 75228.2 հազ. դրամ, որի մեջ մտնում է նաև պահուստային ֆոնդը՝ 70955.2 հազ. դրամ, որը հետագայում նախատեսվում է ուղղել ֆոնդային բյուջե՝ սուբվենցիոն ծրագիր իրականացնելու նպատակով:

2. Կապիտալ՝ ֆոնդային ծախսերը կազմում է 141689.5 հազ. դրամ.

Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում հոդվածով նախատեսվել է 135114.5 հազար դրամ, շենքերի և շինությունների շինարարության համար նախատեսվել է 17930.0 հազ. դրամ, այլ հիմնական միջոցներ՝ 645.0 հազ. դրամ, մեքենաներ և սարքավորումներ՝ 3000.0 հազ. դրամ: Տարբերություն 15000.0 հազ. դրամը նախատեսված է հողի օտարումից որպես մուտք, այդ պատճառով էլ ընդամենը ֆոնդային ծախսերում թվային չի արտահայտվել:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում:***

**5. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ բազմաթիվ քաղաքացիներ դիմել են հողամասեր գնելու առաջարկով, առկա են նշված հողակտորների համայնքային սեփականության վկայականները և համայնքի ավագանու համաձայնության դեպքում կիրականացվի հողամասերի աճուրդ և վարձակալության իրավունքի ձևակերպում: Նախատեսվում է աճուրդով օտարել 5 լոտ հողաաս, իսկ վարձակալությամբ տրամադրել 5 լոտ հողամաս: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
**Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում:**

**6. ԼՍԵՑԻՆ** - Կարեն Արտակի Գաբրիելյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ համայնքի ղեկավարին է դիմել Կարեն Արտակի Գաբրիելյանը՝ իրեն պատկանող 06-066-0117-0097 ծածկագրով 0.199508 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության 1-ին կարգի խոտհարքը՝ գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրամաս կառուցելու նպատակով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության փոխադրելու խնդրանքով:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում:***

**7. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի Վահագնաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 05.12.2022թ. թիվ 149 դրական եզրակացությունը, Փամբակ համայնքի Վահագնաձոր գյուղի վարչական

սահմաններում գտնվող, «ԷՎԵԼՊԻՍ» ՍՊԸ-ի սեփականություն հանդիսացող, 06-102-0012-0048 ծածկագրով 0.19134 հա բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, այլ գործառնական նշանակության հողամասը, 2.8 մեգավատ դրվածքային հզորությամբ փոքր հիդրոէլեկտրակայան կառուցելու նպատակով անհրաժեշտ է փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, էներգետիկայի հողերի գործառնական նշանակության:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում:***

**8. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի Բազում գյուղի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 12.12.2022թ. թիվ 153 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2022 թվականի դեկտեմբերի 20-ի N 01/111.6/10455-2022 գրությունը անհրաժեշտ է Փամբակ համայնքի Բազում գյուղի վարչական սահմաններում գտնվող, Կարեն Պառավյանի սեփականություն հանդիսացող, 06-023-0238-0007 ծածկագրով 0.15933 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը, բնակելի տուն կառուցելու նպատակով, փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում:***

**9. ԼՍԵՑԻՆ** - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2021թ-ի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ Ազնվաձոր բնակավայրում այլընտրանքային նախակրթական ծրագրով իրականացվող մանկապարտեզի շենքի վերանորոգման աշխատանքները սկսվել են: Ծրագիրն իրականացվում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից ԵՄ-ի ֆինանսավորմամբ և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից: Համայնքին է հատկացվում 9019.2 հազ. դրամ, որն անհրաժեշտ է ներառել բյուջեի եկամտային և ծախսային բաժիններում: Մանկապարտեզների դաստիարակների վերապատրաստման նպատակով պետական բյուջեից

տրամադրվող 134.4 հազ. դրամ նպատակային հատկացումը՝ սուբվենցիան անհրաժեշտ է ներառել բյուջեի եկամուտների և ծախսերի համապատասխան տողերում:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում:***

**10. ԼՍԵՑԻՆ** - ՀՀ Լոռու մարզի Ֆամբակ համայնքի տարածքում 2023թ-ին իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի հայտերը հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Ֆամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ անհրաժեշտ է հաստատել Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեից համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված /նպատակային հատկացումներ ստանալու նպատակով/ Ֆամբակ համայնքի կողմից ներկայացվող 5 սուբվենցիոն ծրագրերի հայտերը՝
1. Մարգահովիտ, Լեռնապատ, Անտառամուտ բնակավայրերի փողոցների նորոգում սալարկմամբ՝ տուֆապատման միջոցով:
2. Լեռնապատ բնակավայրի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցում:
3.Վահագնի բնակավայրի փողոցի նորոգում ասֆալտապատման միջոցով:
4. Արջուտ բնակավայրի փողոցի նորոգում ասֆալտապատման միջոցով:
5. Բազում բնակավայրի նախկին համայնքապետարանի շենքի հիմնանորոգում որպես մշակույթի կենտրոն, Ֆամբակ բնակավայրի հանդիսությունների սրահի կառուցում:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
***Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում:***

**11. ԼՍԵՑԻՆ** - Ֆամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին հարցի նախագիծը:
- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Ֆամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2023 թվականի փետրվարի 14-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:
**Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում:**
Ֆամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2023 թվականի փետրվարի 14-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 13.00-ն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Ս. ԱՆԱՆՅԱՆ

Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ա. ՍՐԱՊՅԱՆ

Ա. ԱՆՏԻՆՅԱՆ

Պ. ՊԱՊԻՆՅԱՆ

Ս. ՍԱՐԴԱՐՅԱՆ

Է. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Թ. ԲՈՋՈՒԿՅԱՆ

Ա. ՔՈՉԱՐՅԱՆ

Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Ս. ՄԱՐԱՆԴՅԱՆ

Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Շ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 150-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 17 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի և 16-րդ հոդվածի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 17 հերթական նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ
«27» դեկտեմբերի 2022թ-ի թիվ 17 հերթական նիստի

1. Փամբակ համայնքի համայնքային սեփականության 2022թ-ի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
2. Լոռու մարզի Փամբակ համայնքի բնակավայրերի գլխավոր հատակագծի մշակման նախագծման առաջադրանքը հաստատելու մասին:
3. Դավիթ Արմենի Հովսեփյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին:
5. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և վարձակալության պայմանները հաստատելու մասին:
6. Կարեն Արտակի Գաբրիելյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
7. Փամբակ համայնքի Վահագնաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

8. Փամբակ համայնքի Բազում գյուղի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

9. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2021 թ-ի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման մեջ փափոխություններ կատարելու մասին:

10. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի տարածքում 2023թ-ին իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի հայտերը հաստատելու մասին:

11. Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 151-Ա
ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2022ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջներով՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Փամբակ համայնքի սեփականության 2022թ-ի գույքագրման փաստաթղթերը.

1. Գույք՝ 2346302146 դրամ ընդհանուր արժեքով որից՝
1) Շինություններ - 953425211 դրամ
2) Շենք - 542449721 դրամ
3) Սարքավորումներ - 29927121 դրամ
4) Տրանսպորտային միջոցներ - 115870999 դրամ
5) Տնտեսական գույք - 669828518 դրամ
6) Այլ հիմնական միջոցներ - 30730623 դրամ
7) Գրքային ֆոնդ - 3829998 դրամ
8) Արագամաշ առարկաներ - 239955 դրամ
2. Դուրս գրման ենթակա գույք և սարքավորում - 1841795 դրամ:
3. Գույքագրման ընթացքում պակասորդ և ավելցուկ չի հայտնաբերվել:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 152-Լ

### ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 1998 թվականի մայիսի 5-ի «Քաղաքաշինության մասին» ՀՕ-217 օրենքի 14.3-րդ հոդվածի 24-րդ մասի, 2002 թվականի մայիսի 7-ի «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՕ-337 օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 29-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 29-ի N 4/Ա-8 եզրակացությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի բնակավայրերի (Փամբակ, Ազնվաձոր, Անտառամուտ, Արջուտ, Բազում, Գուշար, Դեբետ, Եղեգնուտ, Ժամատուն, Լեռնապատ, Լեռնաջուր, Ծաղկաց, Մարգահովիտ, Ձորագետ, Ձորագյուղ, Վահագնաձոր, Վահագնի, Քարաբերդ) գլխավոր հատակագծի մշակման նախագծման առաջադրանքը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Փամբակ
համայնքի ավագանու 2022 թվականի
դեկտեմբերի 27-ի N 152-Լ որոշման

**ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ**

**ՀայաստանիՀանրապետությանԼոռումարզիմիկրոռեգիոնալմակարդակի՝ համակցվածտարածականպլանավորմանփաստաթղթերինախագծերի մշակման**

Լոռի-9

(Գուգարքիտարածաշրջան) Փամբակխոշորացվածհամայնք- Փամբակ, Ազնվաձոր, Անտառամուտ, Արջուտ, Բազում, Գուշար, Դեբետ, Եղեգնուտ, Ժամառոն, Լեռնապատ, Լեռնաջուր, Ծաղկոց, Մարգահովիտ, Ձորագետ, Ձորագյուղ, Վահագնաձոր, Վահագնի, Քարաբերդ /18 բնակավայր/

**1. Համայնքի (բնակավայրի)հիմնական բնութագիրը**

| | **բնակչության թիվը՝ գրանցված/ փաստացի** | **մարդ** | **համայնքի վարչական սահմաններում ընդգրկված տարածքը՝** | **հա** |
|---|---|---|---|---|
| Փամբակ | 365 | մարդ | 2021,482 | հա |
| Ազնվաձոր | 570 | մարդ | 2035,0504 | հա |
| Անտառամուտ | 267 | մարդ | 1232,79 | հա |
| Արջուտ | 1230 | մարդ | 3613,02 | հա |
| Բազում | 1914 | մարդ | 4208,89 | հա |
| Գուշար | 0 | մարդ | 0 | հա |
| Դեբետ | 872/910 | մարդ | 3025,37 | հա |
| Եղեգնուտ | 795 | մարդ | 3248,71 | հա |
| Ժամառոն | 0 | մարդ | 0 | հա |
| Լեռնապատ | 1963 | մարդ | 5231,7 | հա |
| Լեռնաջուր | 144/54 | մարդ | 6642,2 | հա |
| Ծաղկոց | 10/6 | մարդ | 0 | հա |
| Մարգահովիտ | 3552 | մարդ | 11627,63 | հա |
| Ձորագետ | 255/243 | մարդ | 213,07 | հա |
| Ձորագյուղ | 344, 269 | մարդ | 992,03 | հա |
| Վահագնաձոր | 328 | մարդ | 1710,64 | հա |
| Վահագնի | 1051/1147 | մարդ | 4491,41 | հա |
| Քարաբերդ | 60/32 | մարդ | 2273,33 | հա |
| **Ընդամենը** | | մարդ | | **հա** |

- *համայնքների 2020 թվականի հողային հաշվեկշիռները կցվում են*

2. **Ռեսուրսների հիմնական տեսակները, արտադրության գերիշխող ճյուղերը, ինժեներատրանսպորտային ապահովվածությունը**

*2.1.* *տվյալներ համայնքումառկաբնական, բուժական, առողջարարական, հանքահումքայիննայլպաշարներիվերաբերյալ*

| | | |
|---|---|---|
| | Փամբակ | գրանիտի քարհանք |
| | Ազնվածոր | - |
| | Անտառամուտ | Ածուխի չգործող հանք |
| | Արջուտ | Ոսկու և բազմամետաղ հանքավայր |
| | Բազում | Առկա է հանքային ջրի փոքր աղբյուր: |
| | Գուշար | - |
| | Դեբետ | - |
| | Եղեգնուտ | - |
| | Ժամանոտ | - |
| | Լեռնապատ | Բնակավայրում գործում է բազալտի բացահանք |
| | Լեռնաջուր | - |
| | Ծաղկոց | - |
| | Մարգահովիտ | - |
| | Ձորագետ | - |
| | Ձորագյուղ | 1 ԲՄԿ |
| | Վահագնաձոր | Առկա է առողջարանական և հանքահումքային պաշարներ |
| | Վահագնի | - |
| | Քարաբերդ | Քարի հանք և ոսկու հանք |
| 2.2. | | *Տվյալներհամայնքումառկաարտադրությանգերիշխողճյուղերիվերաբերյալ* |
| | Փամբակ | քարի արտադրություն |
| | Ազնվածոր | Անասնապահություն, հողագործություն |
| | Անտառամուտ | Կաթի արտադրամաս |
| | Արջուտ | Թռչնի մսի և կաթի արտադրություն |
| | Բազում | Համայնքում առկա է միրգ-բանջարեղենի պահածոների արտադրամաս: |
| | Գուշար | - |
| | Դեբետ | - |
| | Եղեգնուտ | - |
| | Ժամանոտ | - |
| | Լեռնապատ | Կաթի վերամշակման արտադրամաս |
| | Լեռնաջուր | - |
| | Ծաղկոց | - |
| | Մարգահովիտ | Ունենք չգործող կարի արտադրամաս, գործող պանրի գործարան |
| | Ձորագետ | Ձորահէկ Հիդրո |
| | Ձորագյուղ | Կաթի վերամշակում, ցորենի արտադրություն |
| | Վահագնաձոր | Քարամշակում |
| | Վահագնի | Կաթի վերամշակում |
| | Քարաբերդ | - |
| 2.3. | | *տվյալներ համայնքի սոցիալ-կենցաղային, ինժեներատրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների վերաբերյալ* |

| | |
|---|---|
| Փամբակ | - |
| Ազնվածոր | - |
| Անտառամուտ | - |
| Արջուտ | - |
| Բազում | Համայնքը գտնվում է Մ-3 միջպետական նշանակության մայրուղու վրա: Քանի որ կից է մարզկենտրոն Վանաձորին /4 կմ/, ուստի բնակչության կրթական մակարդակը բավականին բարձր է: Մարզկենտրոնի հետ կապն ապահովում է երթուղային տրանսպորտը՝ օրական 5 անգամ: Համայնքը գազաֆիկացված և էլեկտրոֆիկացված է , առկա է ֆիքսված և բջջային հեռախոսակապ: Բջջային կապը և ինտերնետ կապն ապահովում են համայնքում առկա 3 / վիվասել, բիլայն, յուքոմ/ բջջային օպերատորները: Համայնքում իրականացվում է աղբահանություն: Գրեթե 80 տոկոսով ապահովված է գիշերային լուսավորությամբ: Ներհամայնքային նշանակության ճանապարհների 60 տոկոսը բարեկարգ է սալիկապատված է: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, հողագործությամբ, աշխատում են Բազումի և Վանաձորի պետական և համայնքային նշանակության կառույցներում, ծառայում են ուժային կառույցներում, մեկնում են արտագնա աշխատանքի: Համայքում առկա է դպրոց, նախակրթարան, մանկապարտեզ և ֆիզիկական ու մտավոր զարգացման ժամանցի կենտրոն: |
| Գուգար | - |
| Դեբետ | - |
| Եղեգնուտ | - |
| Ժամառուն | - |
| Լեռնապատ | Առկա է 7 մթերային խանութներ |
| Լեռնաջուր | - |
| Ծաղկոց | - |
| Մարգահովիտ | Գյուղում իրականացվում է աղբահանություն, գյուղն ունի արտաքին լուսավորություն |
| Ձորագետ | Լույս, ջուր, բնակավայրի մի հատվածը գազաֆիկացված է, բջջային կապ, ինտերնետ |
| Ձորագյուղ | ԿԵՆՑԱՂԱՅԻՆ՝էլեկտրաէներգիա, ջուր, բեռնատար՝ 16, ինքնաթափ՝ 3 , մարդատար՝ 43, տրակտորներ՝ 25 |
| Վահագնաձոր | - |
| Վահագնի | - |
| Քարաբերդ | գրանիտի քարհանք |

3. **«Բնակավայրի տարածական զարգացման հիմնական հայեցակարգային դրույթներից մեկն է՝ արտակարգ իրավիճակների հետևանքով առաջացող հնարավոր ազդեցության նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացումը:»**

| | |
|---|---|
| ***3.1.*** | ***համայնքի զարգացման ծրագրից բխող՝ սոցիալական, մշակութային, արդյունաբերական, ինժեներատրանսպորտային և այլ համակարգերի կատարելագործմանը ներկայացվող հիմնական պահանջները*** |
| Փամբակ | - |
| Ազնվածոր | Խնդիր- աշխատատեղի բացակայություն, կոմունիկացիա, մարզադպրոց, սրահի անհրաժեշտություն |

| | |
|---|---|
| Անտառամուտ | - |
| Արջուտ | Ներհամայնքային ճանապարհների կառուցում,համայնքային կենտրոնի կառուցում ՝ խաղահրապարակ,սպորտդահլիճ,գյուղտեխնիկայի և գործիքների ձեռքբերում,խմելու և ոռոգման ջրերի արդիականացում: |
| Բազում | Համայնքում անընդհատ տարվում են բարեկարգման աշխատանքներ: Ընթացքի մեջ է մանկապարտեզի բակի կահավորման աշխատանքները: Առաջիկայում նախատեսված է համայնքապետարանի նախկին շենքի վերանորոգման և կահավորման աշխատանքներ, որը ծառայելու է հիմնականում երիտասարդների ժամանցի կազմակերպման և մշակութային խմբակների ձևավորման գործին: Բնակչության շրջանում իրազեկման աշխատանքներ են տարվում հողօտագործման արդյունավետ ծրագրերի առումով, ինչը 2021-2022 թթ բավականին նկատելի է հատկապես անասնակերի և հացահատիկի ցանքի առումով:<br><br>Համայնքի հիմնական գերխնդիրը եղել և մնում է խմելու և ոռոգման ջրի խնդիրը: Համայնքը չունի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ |
| Գուգար | - |
| Դեբետ | Ներհամայնքային և միջդաշտայի ճանապարհների վերանորոգում, խմելու ջրագծի կառուցում-վերանորոգում, նոր տիպային մանկապարտեզի կառուցում, խմելու ջրի ներքին ցանցի վերակառուցում: |
| Եղեգնուտ | աշխատատեղերի ստեղծում, գազաֆիկացման ներքին ցանցի ընդլայնում, ճանապարհների բարելավում,լուսավորություն |
| Ժամանուն | - |
| Լեռնապատ | Չկա մշակույթային կենտրոն որտեղ կգործի տարբեր արվեստի և արհեստի խմբակներ, չկա կարի ֆաբրիկա առկա է աշխատում, |
| Լեռնաջուր | - |
| Ծաղկոց | - |
| Մարգահովիտ | 1. Գյուղատնտեսության զարգացում, գյուղատնտեսական արտադրանքի ավելացում, իրացում, կոլեկտիվների ստեղծում,<br>2. Բնակչության սպասարկման և կոմունալ ծառայությունների բարելավում,<br>3. Տեղական արտադրության զարգացում, բնակչության արտագաղթի պակասեցում,<br>4. Նախադպրոցական, դպրոցական կրթության բարեփոխում, մշակութային, մարզական և սպորտային ուղղությունների զարգացում,<br>5. Տրանսպորտային սպասարկման բարելավում, փողոցների բարեկարգում<br>6. Համայնքում աղբահանության լիարժեք կազմակերպում և սանիտարահիգիենիկ պայմանների ստեղծում,<br>7. Արտակարգ իրավիճակների վերացում,<br>8. Համայնքում կոյուղու կառուցում: |
| Ձորագետ | Ճանապարհաշինություն, ներքին ջրագծի կառուցում |
| Ձորագյուղ | Անասնապահություն, կաթիվերամշակմանարտադրամաս |
| Վահագնաձոր | Ջրոսաշրջություն |
| Վահագնի | Ճանապարհների բարեկարգում, լուսավորություն, մշակույթի տան կառուցում, մանկապարտեզի կառուցում: |
| Քարաբերդ | - |

- *Նախագծային լուծումներն ընտրելիս հաշվի առնել համայնքների զարգացման ծրագրերով և ՀՀ Լոռու մարզի 2017-2025թվականներիզարգացմանռազմավարությամբսահմանվածդրույթները, առանձինհամայնքներինվերաբերողհաստատվածներդրումայինծրագրերը:*
- *Նախագծայինլուծումներընպաստակաուղղելիհամայնքներիզարգացմանը, դրանցումառկաներուժիօգտագործմաննուուժեղացմանը, տարածքներիհամաչափզարգացմանապահովմանը հասրուկուշադրությունդարձնելովթույլզարգացածտարածքներումներդրումներիհամարնպաստավորոլորտներիբացահայտմանըևհամապատասխանգոտիներիընտրությանը:*
- *Տարածքայինզարգացմանքաղաքականությանբարելավման, պլանավորմանուիրականացմանգործընթացներումապահովելտարածքայինուտեղականդերակատարներիառավելակտիվմասնակցությունը:*

**4. Նախագծմանհիմքը**

*ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N1902-Լ որոշման N1 հավելվածով հաստատված (Քաղաքաշինության կոմիտե) 1.1.1. կետի և ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «Քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 531-Լ որոշման հավելված 2-ի 3.2.2. կետի համաձայն*

## 5. «Կառավարության 2012թ. հոկտեմբերի 25-ի N1351-Ն և Կառավարության 2012թ. փետրվարի 9-ի N138 որոշումներ:»,

| | |
|---|---|
